№ 213 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 1901 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 № 213

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկ.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(թողի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում է.
իւրաքանչիւր տողաչափին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն Բեակրիպա.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիւղական երիտասարդութեան. Նամակ Էջմիածնից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրական դէմքեր։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԲԷՍԿՐԻՊՏ

Երէկ, սեպտեմբերի 26-ին, առաւօտեան, Կովկասի քաղաքացիական մասի Կառավարչապետի տան մէջ, երբ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչին ներկայացան Թիֆլիսի եւ Քութայիսի Նահանգների ազնուականները, Մեծ Իշխանը բարեհաճեց բաղդաւորացնել նրանց Արքայական շնորհների յայտարարութեամբ, դիմելով նրանց հետեւեալ բարձրանշան խօսքերով։

«Ես երջանիկ եմ, որ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԸԸ բարեհաճեց արժանացնել ԻՆՁ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ներկայացուցիչը լինելու պատուին Վրաստանը Ռուսաստանի հետ միացման հարիւրամեակի տօնախմբութեան հանդէսին։ Այդ անցքի յիշատակը, որ ռուսաց ժողովուրդը եւ վրաց ժողովուրդը շաղկապեց միմեանց հետ առաջին անխզելի կապերով Ռուսաց Թագաւորների իշխանութեան տակ, թանգ պէտք է լինի իւրաքանչիւր ռուսի եւ իւրաքանչիւր վրացու համար։ Դա մանաւանդ թանգագին է ինձ համար, որովհետեւ տասնեւինն տարի շարունակ կառավարելով Անդրկովկասեան երկիրը, ես նրա հետ ժամանակայ եւ ամբողջ սրտով նրան սիրեցի։ Այդ պատճառով էլ ձեր տօնը ես համարում եմ եւ իմ տօնը։

Թագաւոր Կայսրի ողջոյնը եւ Նորին Մեծութեան հրամանները ներկայ հանդէսի առիթով բացատրված են իմ անունով տրված Բարձրագոյն բէսկրիպտի մէջ։

Առաջարկում եմ Կառավարչապետին կարդալ այդ բէսկրիպտը»։

ԲԷՍԿՐԻՊՏ

Ձերդ Կայսերական Բարձրութիւն. Վրաստանը Ռուսաստանի հետ միացնելու դարեւոր տարեդարձի տօնախմբութեան արժանայիշատակ օրը ես գոհութեամբ կանգ եմ առնում մեր անցեալի այս փառաւոր երեսի վրա։ Հարիւր տարի առաջ Վրաստանի Թագաւոր Գէորգի Իրակլիեվիչ դրեց իրան եւ իր երկիրը ի Տէր հանգուցեալ Կայսր Պավէլ I-ի հովանաւորութեան եւ իշխանութեան տակ։ Այդ կամաւոր հպատակութեամբ սկիզբ դրվեց Կայսրութեան հետ Վրաստանի անխզելի միացման եւ Ռուսական Պետութեան տարածման Կովկասեան լեռնաշղթայի միւս կողմը։ Այն ժամանակից վրաց ժողովուրդը եւ մանաւանդ վրաց ազնուականութիւնը անփոփոխ ցոյց են տալիս հաւատարմութեան օրինակ Ռուսաց Թագաւորներին եւ իրանց նոր հարենիքին։

Պատերազմների բոլոր դաշտերում, որտեղ անցեալ դարի ընթացքում մեր զօրքերը կուրծք առ կուրծք հանդիպում էին Ռուսաստանի բոլոր թշնամիներին, վրաց իշխանները, թաւադների եւ ազնաւուրների սերունդները թափում էին իրանց արիւնը ռուսական գործի համար եւ իրանց արիական քաջութեամբ նպաստում էին ռուսական զէնքի աջողութեան։ Քիչ չեն այն վրացական իշխանական եւ ազնուական անունները, որոնց պատմութիւնը մտցրել է ռուսական զօրքի անթառամ փառքով պսակված զօրավարների ցանկը. այդպիսի անուններ յայտնի են եւ այն անձերի թւում, որոնք յարգանք են վաստակել ժամանակակիցների կողմից եւ բարի յիշատակ թողել յետնորդներին իրանց օգտաւէտ գործունէութեամբ քաղաքացիական վարչութեան մէջ։

Արդարացի կերպով ուշադրութեան առնելով վրաց ազնուականութեան մատուցած պետական ծառայութիւնները Ռուսաստանին՝ որոնք արժանացել են շատ անգամ Իմ Նախորդների ողորմած գնահատութեան, ես յայտնում եմ Նրան Իմ Կայսերական եւ Արքայական բարեհաճութիւնը։ Այս բարեհաճութեան իբրեւ տեսանելի ապացոյց թող ծառայէ այն, որ ես Իմ Ներկայացուցիչ ընտրեցի ներկայ տօների ժամանակ Ձեր Կայսերական Բարձրութիւնը, Կայսերական Տան Աւագագոյն անդամին, որ կարողացել է իր երկարամեայ փառաւոր եւ բարեացակամ վարչութեան ժամանակ Կովկասեան երկրում ներշնչել նրա ազգաբնակութեան մէջ անկեղծ սէր եւ անձնուիրութիւն դէպի ինքը։

Կամենալով նշանաւոր կացուցանել Վրաստանի Ռուսաստանի հետ միանալու հարիւրամեայ տարեդարձը մի քանի միջոցների ձեռնարկութեամբ, որոնք կարող են ապահովել վրաց ժողովրդի ստիպողական կարիքների գոհացումը, ես բարւոք համարեցի՝

1) Հիմնել Վլադիկավկազում կադէտների կօրպուս եւ այս միջոցով աւելացնել ձրիավարժների տեղերի թիւը, որոնք տրվում են պետութեան՝ կադէտների կօրպուսների մէջ Թիֆլիսի եւ Քութայիսի նահանգների տոհմական ազնուականների որդիներին։

2) Իբրեւ նպաստ Թիֆլիսի եւ Քութայիսի նահանգների ազնուականներին՝ մատաղ սերունդի կրթութեան եւ դաստիարակութեան գործում, տալ իւրաքանչիւր տարի պետական գանձարանից քառասուն հազար բուբլի երկու նահանգների համար, յանձնելով տեղական նահանգական ազնուականութեան ժողովներին՝ յայտնել իրանց ցանկութիւնը յիշեալ գումարի գործածութեան մասին եւ ներկայացնել իրանց մտադրութիւնները այս առարկայի վերաբերմամբ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին՝ ըստ ընդունված կարգի նրանց ընծացք տալու համար։

3) Թիֆլիսի եւ Քութայիսի նահանգներում տոհմական ազնուականութեան պատկանած հողերը, որոնք Կառավարիչ Սենատին 1900 թուականի յունիսի 12-ին տուած Անուանական Հրամանագրով ազատված են պետական հողային հարկից ներկայ եռամեակի ընթացքում, սկսած 1901 թուից, ազատել եւ հետեւեալ 1904—1906 եռամեակի ընթացքում յիշեալ հարկի վճարումից։

4) Տալ Թիֆլիսի նահանգական ազնուականութեան ժողովին իրաւունք կարգադրել Թիֆլիսի ազնուականութեան հողային բանկի զուտ արդիւնքների այն մասերը, որոնք, համաձայն նրա կանոնադրութեան, յատկացվում են Թիֆլիսի նահանգի հողատէր եւ հողագործ ազգաբնակութեան հասարակական կարիքները լրացնելու եւ տեղական ազնուականութեան համար գիւղատնտեսական դրամագլուխ կազմելու նպատակով՝ այն պայմանով, որ ժողովի որոշումները հասարակական կարիքների համար յատկացվող գումարների մասին ներկայացվեն Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի հաստատութեանը։

5) Տալ նոյն ազնուականութեան, Թիֆլիսի ազնուականութեան հողային բանկի լիկվիդացիայից յետոյ մնացած գումարները բաժանելիս, համաձայն այն աղբիւրների, որոնցից նրանք ստացված են, սեփականութեան իրաւունք այդ գումարների եւ այն մասի վրա, որ բաժին կընկնի ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր II Կայսրի հրամանով բանկին տուած դրամագլխին, եւ

6) Ներել արքունական պալատների հաշւում ցոյց տուած մինչեւ 1901 թուի յունվարի 1-ը գանձարանին հասանելիք այն տուրքերի եւ տուգանքների ապառիկները, որոնք վերացված են՝ 1900 թուի յունիսի 12-ին Պետական Խորհրդի հաստատած կարծիքով, ջնջելով այդ ապառիկները եւ տուգանքները հաշիւներից։

Տալով մինիստրներին համապատասխան ցուցմունքներ իմ այդպիսի կամքը կատարելու համար, ես յանձնարարում եմ Ձեր Կայսերական Բարձրութեանը յայտարարել այդ բանի մասին Թիֆլիսի եւ Քութայիսի նահանգների ազնուականութեանը եւ Անդրկովկասեան երկրի ամբողջ ազգաբնակութեանը։

Մնում եմ դէպի Ձեզ առ միշտ բարեհաճ

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով գրված է՝

եւ ի սրտէ Ձեզ սիրող

«ՆԻԿՈԼԱՑ»։

Կօմպիէն,

1901 թ. սեպտեմբերի 7.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

(Նամակ Բալախանիից)

Դրամական ճգնաժամը ունեցաւ իր խոշոր հետեւանքները։ Ամենամեծ ընկերութիւններն անգամ արձակեցին մեծ թւով ծառայողներ՝ բանուորներից եւ գործակատարներից. հետզհետէ սկսում են դադարեցնել նաւթահանքերի գործերը. բանվող նաւթահանքերում ծառայողների ոռճիկները զգալի կերպով պակասեցնում են. մի գլուխ չորս կողմից գոռում են՝ փող չը կայ։ Մանթաշեան, Միրզոյեան եւ ներ չատ են եղել մինչեւ այդ ժամանակ։ Նոյն իսկ ժողովրդասիրութեամբ վառված Արովեանը իր հռչակաւոր վէպի մէջ աչքի առաջ ունեցել է մի կեանք, որ անցած էր, պատմական էր։ Իսկ ներկայի հնչը, իսկ ոչն մարդը, որ ապրում է հայրենի աւերակների վրա, որ երեւակայութիւն չէ, ատուեր չէ, այլ չօշափելի մարմին եւ արիւն։ Այդ մարդուն է ահա նուիրում իր երրորդ երգը Ռափայէլ Պատկանեան։ Եւ երգը գուրս է գալիս չատ սրտառուչ, չատ քնքոյշ։ «Շինականի առաւօտեան երգն» է դա, որ այսօր էլ երգվում է, այժմ էլ մեր գեղեցիկ բանաստեղծութիւններից մէկն է։

Նրա մէջ դրված է գիւղական աշխատաւոր կեանքի մեղեդին. դա ամբողջապէս գիւղի, տնարարութեան մի օրհներգ է։ Հողագործի ճակատի քրտինք, անդուլ, չարքաշ աշխատանք վաղ առաւօտից մինչեւ ուշ երեկոն—ահա ինչն է ոգեւորում բանաստեղծին պատմական փառքի հետ, նրանից էլ ջերմ կերպով։ Այսպէս էլ նա մնաց մինչեւ վերջը։ Իբրեւ սիրոյ երգիչ, իբրեւ լիրիկական զեղումների բանաստեղծ նա միշտ թոյլ է եղել. անհատական տրամադրութեան, վշտի եւ ուրախութեան մարդ չէր նա։ Ժողովուրդ, հայրենիք, ազգայնական գաղափար—ահա հզօր տարրեր, որոնք բորբոքում էին նրա տաղանդը, հանել էին տալիս նրա քնարից հուժկու ձայներ, արտասունք եւ չանթեր։ Այդ տեսակ ատուածային ձիրքի մէջ չէ կարելի չը տեսնել մի տեսակ գերբնական ոյժի կարգադրութիւն, «նախախնամութեան մատ», ինչպէս ասվում է կրօնական լեզուով։ Մի աղգ զարթնում էր դարաւոր քնից. պէտք էր մի երկնային փող, որ հնչեցնէր նրա ամենաղջում նոր ժամանակի ձայները—հայրենիք, մարդկութիւն, ժողովուրդ, գաղափար։ Ռափայէլ Պատկանեանը ժամանակին էր ծնվում։ Նա կրում էր իր մէջ ժամանակի խորհուրդը։ Լեզու պիտի ունենար այդ խորհուրդը՝ ժողովրդականանալու, իրականութեան մէջ ներս ծծվելու համար։ Եւ այդ լեզուն՝ Ռափայէլ Պատկանեանն էր։

Միայն իր երգով չէր նա ծառայում ազգի վերածնութեան գործին։ Ահա նա թողնում է Թիֆլիսը, գնում է Ռուսաստան՝ ուսումը շարունակելու համար։ Մի քանի տարի Դօրպատ է մնում, գերմանական ուսանողութեան ոգով ներշնչվում, ապա անցնում է Մոսկվա, մի քանի ժամանակ էլ այդտեղ է հաստատուն յաճախում, բայց վերջը տեղափոխվում է Պետերբուրգ, ուր ուսանող է մնում մինչեւ 1860 թուականը։

Այժմեան ժամանակ, գաղափարից զուրկ, թուլամորթ սերունդը տալիս է իրան արժանի, իրան հարազատ ուսանողութիւն։ Մենք շարունակ գանգատվում ենք, որ ուսանող երիտասարդութիւնը ոչինչ չէ անում, գաղափարական չէ, անիրաւ մամոնայի եւ աշխարհային վայելքների ստրուկ է։ Մեր այդ գանգատներին պատասխանում են, բերելով հարիւր ու մի արդարացնող հանգամանքներ. էլ չրջան, էլ նիւթական միջոցներ, էլ ժառանգականութիւն, էլ հասարակութեան տրամադրութիւն։ Ո՞վ է մեր այս ժամանակակից ամենախոշոր վէճի մէջ արդարը եւ ո՞վ է մեղաւորը.—մենք, գանգատվողներս, թէ մեզ պատասխանողները։ Թող այդ հարցին պատասխան տայ ուսանող Ռափայէլ Պատկանեանը։

Հարուստ չէր նա. նոյն իսկ վկայում են, որ Դօրպատը թողնելու պատճառը նիւթական միջոցների պակասութիւնն է եղել եւ երեւի նա ինքն էլ անձամբ ճաչակել է աղքատ ուսանողի կեցութեան այն դառնութիւնները, որոնց նա նկարագրել է «Ես նշանած էի» վէպի մէջ։ Բայց ինչքա՞ր է անել տալիս սուրբ ոգեւորութիւնը այդ անապահով ուսանողին։ Համարեա տասը տարի նա կրում էր ուսանողական համազգեստ։ Ի՞նչ էր նա տեսնում այդ «կապտածղի գտակի», մէջքին կապած այդ «հատու արի» մէջ։

Ով չի եղել ուսանող,
Լաւ է որ միշտ մնար հող,
Քանց Աստուծոյ լոյս արևն
Անասնոց պէս վայելէր։
...Ով չի երդուել ընկերաց՝
Պաշտպան լինել հայրենեաց
Վերջին արիւնը թափել,
Հայրենիքը ազատել.
Մեզնից էնպէսն հեռանա՛յ,
Լոյս աշխարհից վերանայ.
Թող անասնոց կարգն ընկնի,
Թող մեր մէջ նա չը մտնի։

Եւ Պատկանեանը իրաւունք ունէր այսպէս խօսել ոչ միայն իր կողմից, այլ այն ժամանակվայ ուսանողութեան կողմից։ Այդ «մեզնից»-ը, այդ «մեր մէջ»-ը բոլորովին արդարացի են գործ ածված. հայ ուսանողութեան լաւագոյն մասն էր տոգորված այդ գաղափարներով։ Ուսանողութիւնն էր, որ կազմեց մեր հասարակութեան առաջաւոր մասը, այն մարտնչողների խումբը, որ հաւաքվեց մեր գործիչների շուրջը եւ կռիւ սկսեց յանուն նոր գաղափարների՝ հին, փտած մարքերի եւ նախապաշարմունքների դէմ։ Ուսանողութիւնը եր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

ՌԱՓԱԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

IV

1851 թուականի առաջին հինգ ամիսներն էլ Ռափայէլ Պատկանեանը անց է կացնում Թիֆլիսում։ «Արարատը» գոյութիւն է պահպանում մինչեւ նոյն տարվայ մայիս ամիսը։ Նրա մէջ լոյս են տեսնում Ռափայէլի երկու ոտանաւորներն էլ։

Սրանք էլ նշանաւոր են, որովհետեւ բանաստեղծի տաղանդի միւս խոշոր յատկութիւնն են արտայայտում։ Պատմական հերոսներով ոգեւորվող հայրենասիրութիւնը, որ, ինչպէս տեսանք, ծնունդ առաւ Վենետիկում եւ անցաւ թիւրքահայերի մէջ, համարեա միշտ էլ փակված մնաց այդ սահմանների մէջ։ Հայ ազգասէրը տեսնում էր իր առջեւ միայն երեւակայական Հայաստանը, պատմական ստուերների աշխարհը։ Բայց Ռափայէլ Պատկանեանը հէնց առաջին տարին ցոյց տուեց, որ միայն Զարմայրներն ու Լեւոնները չեն նրան ոգեւորում, այլ եւ այն իրական մարդը, որ ապրում է այժմ իբրեւ այդ հերոսների շարունակութիւն։

Այստեղ ահա երեւան է գալիս Պատկանեանի ահագին նշանակութիւնը մեր գրական վերածնութեան գործում։ Հնութիւնը պատմութեան, երգի, քննադատութեան մէջ պատկերացնող-

դրանց նման շատ մեծ ֆիրմաներ արձակեցին եւ արձակում են այնպիսի ծառայողներ, որոնք 10—15 տարի սեւ նաւթի մէջ շաղախված, ֆիզիկապէս փչացած եւ անմիջապէս դրութեան մէջ քարշ էին տալիս ծառայութիւնը օր ու գիշեր։ Ամեն տարի մայիս ամսից այս տեղի բանուորների մի որոշ մասը հեռանում է հայրենիք աշխատելու իր հողի համար. այդ աշխատանքը տեւում է մինչեւ սեպտեմբեր։ Կան այնպիսիները, որ մնում են էլ աւելի, մինչեւ այդիների վերջանալը։ Վերջանում են այդ աշխատանքի օրերը, դարձեալ նոյն հոսանքը դէպի նաւթային աշխարհը։

Մեզ հեռու կը տանէր, եթէ կանգ առնէինք այն խնդրի շուրջը՝ թէ որքան շլացած կերպով են վազում դէպի այս հոչակաւոր քաղաքը նոյն իսկ այնպիսի գիւղացի մարդիկ, որոնք ունեն սեփական հող եւ կարգին ապրուստ. չը մոռանանք այն մեծաքանակ խմբերով այս տեղ մտնողներին, որոնց պատճառները՝ հողի անբերրիութեան, անասունների կոտորածի եւ վաշխառուի ճիրաններից ազատվելու մէջ պէտք է որոնել։ Այժմ երբ Բագուում տիրում է մեռելային դրութիւն եւ չարագուշակ լուրերը գալիս են աւելի բարդացնելու տիրող պայմանները, կարելի է երեւակայել, թէ ինչ պիտի լինի մօտիկ ապագայում ծառայողների վիճակը։ Ինչ պիտի անէ հանքատէրը. նա չը պիտի մարդկանց ոռճիկ տայ եւ պահէ. եթէ կարողանայ՝ մի քանի ամսում ծառայածի փողը կը տայ եւ բարի ճանապարհ... չը պիտի մոռանալ, որ նաւթը վեց կօպէկ է։

Ի նկատի ունենալով այս հանգամանքները, այս մի քանի տողերով ցանկալի էր գիւղական գրագէտ երիտասարդութեան ուշադրութիւնը դարձնել Բագուում տիրող ներկայ գործերի դրութեան վրայ։ Լաւ կը լինէր, որ գիւղում խմբվէին ձեռնհաս մարդիկ եւ լրագրի օգնութեամբ բացատրէին գիւղացիներին, որ գոնէ առ այժմ իզուր է դէպի Բագու գալը՝ այն յոյսով, որ շուտ կարելի է գործի կպչել։ Պիտի տեսնել փողոցներում թափառող հարիւրաւոր անգործ մարդկանց. ամիսներով թափառելուց յուսահատված՝ չը գիտեն ինչ անեն դրանք. գործ չը կայ. այդ հերիք չէ, միջոց էլ չը կայ տուն վերադառնալու։ Դեռ նորերս կառավարութեան ջանքերով արգելվեց բանուորներին Ռուսաստանից Բագու մտնել, իսկ անգործներին տրվեց շաբաթ չնչին եւ ձրի գներով տոմսակ այստեղից հեռանալու։ Արհեստաւորներից կազմվեցին խմբեր, որպէս զի մեծ արհեստանոցներում մնացած արհեստաւորները հերթով բանեն, աշխատանքից չը զրկվելու համար. աւելացրէք դրա վրա, որ բացվել է հանդանակութիւն յօգուտ չունեւոր արհեստաւորների եւ բանուորների։ Գործակատարների դրութիւնը աւելի վատթար է, մանաւանդ ընտանիքաւորներինը։ Վերջիններս նոյն իսկ գործերի ամենաաջող ժամանակը աւելի քիչ էին վարձվում նաւթահանքերում. տիրող կարծիք է բարձր շրջաններում, որ նրանք ծառայութեան համար անպէտք են եւ պահանջները աւելի շատ։ Արձակվածներից շատերը մտածում են հայրենիք վերադառնալու, յոյս չունենալով կրկին ծառայութիւն գտնելու։

Այս է գործերի ներկայ դրութիւնը, որ կարծում ենք, բաւական համոզիչ պիտի լինի յետ կանգնելու այն մտքից, որ Բագուում այժմ փող աշխատելը եւ գործ գտնելը շատ հեշտ է։ Բայց ինչ անէ հայ գիւղացին, բանուորը. նա կարդալ չը գիտէ, լրագիրը նրա համար վերացական մի բան է, իսկ նրա տուած լուրերը ոչ-իսկական։ Այդ դէպքում պարտականութիւնը ծանրանում է գիւղացի երիտասարդների, քահանաների եւ տանուտէրների վրա. պէտք է հասկացնել, բացատրել գիւղերում գործերի ներկայ վիճակը, անգործ ամիսներով թափառելը։ Մենք հաւատացած ենք, որ այդ միջոցներով կարելի է դադարեցնել դէպի Բագու եկողների հոսանքը։

Ն. Տէր-Ղազարեանց

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Սեպտեմբերի 18-ին

Բագուեցի պ. Հ. Մելիքեան, այցելելով Սանահին, Հախպատ, Անի, Կարս, Տիկոր, Բէշքիլիսա եւ Ղոչվանք, ամսոյ 13-ին եկաւ Էջմիածին իր երկու տղաների, Բագուի ծխական քահանայ Աբգար քահանայի եւ գերմանացի դաստիարակչի հետ միասին եւ նոյն օրը ներկայացաւ Վեհափառին։

Պ. Մելիքեանի այս փոքրիկ ճանապարհորդութեան նպատակը եղել է՝ մի կողմից ծանօթացնել իր տղաներին յիշեալ վանքերի եւ աւերակների ու պատմական տեղերի հետ, իսկ միւս կողմից որոշել նոր վեհարան կառուցանելու հարցը եւ այդ մասին ստանալ Վեհափառի համաձայնութիւնը։

Թէ որքան նշանակութիւն ունի նոր վեհարան կառուցանելու միտքը, այդ հասկանալի կը լինի միանգամայն այն բոլոր անձանց, որոնք այցելել են Էջմիածինը եւ ներկայացել Վեհափառին։ Մի կողմը թողած այժմեան վեհարանի ագեղ ձեւը, որ վանական հին խցերի տպաւորութիւն է թողնում նայողի վրա, ներսը աւելի եւս անյարմար է եւ տձեւ թէ սենեակների դասաւորութեամբ, թէ նեղ ու փոքրիկ լուսամուտներով եւ թէ մութ ու նեղ անցքերով։ Այս բոլոր պակասութիւնների հետ կապված էին եւ բազմաթիւ անյարմարութիւններ, որոնք զգացվում էին գլխաւորապէս այն ժամանակ, երբ Էջմիածինը այցելում էին բարձրաստիճան անձինք ու պատուաւոր հիւրեր։ Վեհարանի շինութեան ներկայ վիճակը անպատուաբեր էր այն հայերին, որոնց բնակարանները աւելի գեղեցիկ, աւելի յարմար եւ աւելի հարուստ են հագեցուած, քան Ամենայն հայոց Կաթողիկոսի վեհարանը։ Բնականաբար նոր վեհարան կառուցանելու միտքը պէտք է յղանար հարուստ հայերի մէջ եւ ուրախալի է, որ այդ միտքը իրագործում են այսօր բագուեցի հայերը։

Հէնց առաջին այցելութեան ժամանակ Վեհափառը տալիս է իր համաձայնութիւնը եւ պ. Մելիքեանի առաջարկութեամբ հետեւեալ ուրբաթ օրը հայրապետական կօնդակով վեհարանի շինութեան յանձնաժողովի անդամներ են նշանակվում՝ Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեան, Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունի, Մխիթար, Կարապետ եւ Եղիշէ վարդապետները եւ դպիր Գալուստ։ Ամսոյ 16-ին, երեկոյեան, տեղի ունեցաւ յանձնաժողովի առաջին նիստը ներկայութեամբ պ. Մելիքեանի, ուր որոշվեց, որ նոր վեհարանի շէնքը լինի երկու եւ կէս յարկ. ներքին—կէս յարկում պէտք է շինվեն՝ խոհանոց, մառանատուն եւ ծառաների ու պահապանների բնակարաններ, երկրորդ յարկում—դիւանատուն, դիւանապետ, դիւանատան ծառայողների եւ պատուաւոր հիւրերի բնակարաններ իրանց բոլոր յարմարութիւններով, իսկ երրորդ յարկը բաղկացած կը լինի երկու մասից, մէկ մասում պէտք է լինի Վեհափառի համար մէկ մեծ ընդունարան դահլիճ՝ հանդիսաւոր օրերի համար, մի փոքրիկ դահլիճ եւ մի սպասողական դահլիճ, գրադարան, կաբինէտ, սեղանատուն, ննջարան, ծառաների եւ այլ կարեւոր սենեակներ, իսկ միւս մասում—չքեղ սենեակներ, ծառայի, վաննայի եւ այլ կարեւոր սենեակներով բարձրաստիճան անձանց համար։ Նոր շինութեան մակարդակը պէտք է յանձնվի մի հմուտ ճարտարապետի այն պայմանով, որ ֆասադը լինի բուն հայկական ճաշակով եւ հաւանութիւն գտնէ յանձնաժողովի կողմից, իսկ շինութեան ամբողջ ընթացքում կանոնաւորութեան վրայ պէտք է հսկէ Երեւանից հրաւիրված մի ճարտարապետ։ Շինութեան գործը կը սկսվի անմիջապէս, երբ պ. Մելիքեանից կը ստացվի 2000 ր. նախնական պատրաստութիւններ տեսնելու։

Վեհարանի նոր շէնքը որոշված է կանգնեցնել զանգակատան դիմաց, սինոդի նոր շէնքի ուղղութեամբ, վեհարանի պարտիզի հիւսիսարեւմտեան անկիւնում, այնպէս որ քանդելու կարիք կը լինի հին վեհարանի միմիայն մի մասը, իսկ ծաղկեայ եւ հանդիսաւոր դահլիճները իր միւս մասերով կարելի է եւ ցանկալի է պահել իբրեւ հնութիւն։

Որքան տեղեկացանք, նոր վեհարանի շէնքի համար ժողոված է այժմ մօտաւորապէս 50 հազար ռուբլի, որ գտնվում է պ. Մ. Արամեանցի մօտ։ Սակայն ծախսելի գումարի քանակութիւնը դեռ եւս անորոշ է, բայց աշխատում են, որ շէնքը ունենայ վայելուչ կերպարանք։

Պ. պ. Մ. Արամեանցին եւ Հ. Մելիքեանցին, որպէս նախաձեռնողների, օրհնութեան կօնդակ ուղարկվեց։

Ա. Օհանջանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երեքշաբթի, սեպտեմբերի 25-ին, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ եւ նորին մեծութիւն յունաց թագուհին այցելեցին Թիֆլիսի մանկաբարձական ինստիտուտը, որ կրում է հանգուցեալ Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէօդորովնայի անունը։ Այժմ այդ ինստիտուտում կառուցվում է մի շինութիւն, որի համար Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ նուիրել է 20,000 ռուբլի։ Նոյն օրը երեկոյեան բոլոր օգուտափառ հիւրերը հրաւիրված էին իշխան Բագրատիօն-Մուխրանսկու մօտ, ուր նրանց առաջարկվեց թէյ եւ ապա տեղի ունեցան պարեր։ Բարձր հիւրերը մնացին Մուխրանսկու մօտ ժամի 9½-ից մինչեւ 11½-ը։

—

Երեքշաբթի, սեպտեմբերի 25-ին, առաւօտեան 9 ժամին, Սիոնի մայր-եկեղեցում տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ եւ ապա հոգեհանգիստ ռուսաց կայսրների՝ Պաւէլ I-ի, Ալէքսանդր I-ի, Նիկոլայ I-ի, Ալէքսանդր II-ի, Ալէքսանդր III-ի, եւ վրաց վերջին թագաւոր Գէօրգի XII-ի յիշատակին։ Պատարագը մատուցանում էր Վրաստանի էկզարխ արքեպիսկոպոս Ցիլովիան։ Հոգեհանգստին ներկայ էին Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ, նորին մեծութիւն յունաց թագուհի Օլգա Կոստանտինովնա, Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ, Մեծ Իշխան Գէօրգի Միխայլովիչ իր օգուստափառ ամուսնու՝ Մեծ Իշխանուհի Մարիա Գէօրգիեվնայի հետ, Մեծ Իշխանուհի Ելենա Վլադիմիրովնա, յունական արքայորդիներ Քրիստոֆոր եւ Անդրէյ, Կովկասեան բարձր իշխանութեան ներկայացուցիչները, Թիֆլիսի ու Քութայիսի նահանգների ազնուական դասակարգը եւ բազմաթիւ աղօթաւորներ։ Հոգեհանգստից յետոյ տեղի ունեցաւ մաղթանք։ Ապա, երբ ժամասացութիւնը վերջացաւ, նորին մեծութիւն յունաց թագուհին եւ նոցա Բարձրութիւնները նայեցին մանրամասնաբար Սիոնի մայր տաճարի եկեղեցական զգեստարանի հնութիւնները։

—

Երէկ, չորեքշաբթի, սեպտեմբերի 26-ին, Ամենայն հայոց Կաթողիկոս Մկրտիչ I պատիւ ունեցաւ ներկայանալու Կովկասի նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչին եւ հելլէնների թագուհի Օլգա Կոնստանտինովնային։ Վեհափառը մաղթեց թագուհուն եւ Մեծ Իշխանին բարի գալուստ եւ օրհնեց Նրանց։

—

Երէկ, սեպտեմբերի 26-ին, կովկասեան ցուցահանդէսը այցելեցին Թիֆլիսում ժողովված կովկասեան ազգերի ներկայացուցիչները, թըւով մօտ 1500 անձն։ Այդ բազմաթիւ անձանց այցելութեան պատճառով՝ ցուցահանդէսում մուտքը փակված էր կողմնակի այցելուների համար մինչեւ ժամի 12-ը։ Ցուցահանդէսում

գում էր, խորհում էր, գրում էր, թարգմանում։ 1850-ական թուականներին Մոսկվայում, հայ ուսանողների մէջ, սկսված էր գաղափարական շարժում։ Այնտեղ էր Ստեփանոս Նազարեանցը, որ շարունակ «հայութիւն, առաջադիմութիւն» էր քարոզում։ Բայց նա դեռ չէր սկսել իր հրապարակախօսական գործունէութիւնը, երբ ուսանողների մի փոքրիկ շրջան յղանում է գրական ընկերակցութիւն կազմելու եւ ժողովրդի համար ընդհանրացնութեան գրքեր հրատարակելու միտքը։

Ընկերակցութիւնը հիմնվում է 1854 թուին. նրա հիմնադիրը երեք հոգի են, որոնցից մէկն է Ռափայէլ Պատկանեանը։ Հիմնադիրների անուններից եւ ազգանուններից (Գէորգ Բանանեան, Մնացական Թիմուրեան, Ռափայէլ Պատկանեան) կազմվում է «Գամառ Քաթիպա» կեղծ անունը, որի տակ պիտի լոյս տեսնէին զանազան գրական աշխատութիւններ։ Ընկերակցութիւնը Մոսկվայում չէ տպագրել տալիս իր գրքերը, թէեւ այնտեղ կայ հայերէն տպարան։ Պատճառն այն է, որ ամենաեռանդոտ, հայերէնագէտ անդամը, Պատկանեանը, Պետերբուրգում է ապրում։ Այնտեղ նա մի ինչ-որ օտարազգու տպարանում գտնում է հայոց տառերի մայրեր, ծանր պայմաններով ձուլել է՝ տալիս տառեր, հաստատում է տպարան եւ սկսում է գործել։

1855 թուականի մայիսին Պետերբուրգում լոյս տեսաւ «Գամառ-Քաթիպա» տետրակը, 16 երեսից. նրա մէջ կային չորս ոտանաւորներ, 5 արձակ գրուածք։ Ոտանաւորները, ի հարկէ, Ռափայէլի գրչին էին պատկանում։ Տետրակի ճակատին տպված էին ռուս յայտնի գրող Կարամզինի խօսքերը—«Գրէ այնպէս, ինչպէս որ խօսում են եւ խօսէ այնպէս, ինչպէս որ գրում են»։ Գրաբարի եւ աշխարհաբարի թունդ մրցութեան ժամանակներն էին։ Հին լեզուն պաշտպանների մի ամբողջ լեգիոն ունէր եւ չէր ուզում զրկվել իր փառքից ու տիրապետութիւններից, ասպարէզ տալ նորին, որի ետեւում կանգնած էին մի քանի հատ երիտասարդ մարդիկ։ Վերջիններս փառաւոր կերպով հնի թաղումն էին կատարում եւ հէնց այդ պատճառով էլ ազգութեան դաւաճաններ էին համարվում։ Պէտք էր երկար ու բարակ բացատրել, թէ դա դաւաճանութիւն չէ, թէ մեռածը գերեզմանում են դնում եւ ոչ թէ քաշքշում հրապարակներով։ Վէճը երկար էր ու կատաղի։ Նոր լեզուով գրող մեր առաջին հեղինակները, Աբովեան եւ Նազարեան, հարկադրված էին պաշտպանվել, յարձակվել։ Պատկանեանը չէր մասնակցում այդ անվերջ վէճերին։ Հարցը նա վճռում էր գործնական կերպով. ուղղակի աշխարհաբար էր գրում, եւ Կարամզինի վերոյիշեալ խօսքերը նրա համար մի կարճ եւ ազդու պատասխան էին՝ ժամանակի թթու, աղմկարար ազգասէրների դէմ, որոնք կարծում էին թէ հայոց ազգը կը ջնջվի, եթէ վերանայ գրաբարը։ Պատկանեանը վէճերով չէր ապացուցանում թէ ազգը չի ջնջվի, այլ իր գեղեցիկ աշխարհաբարով։ Այն, ինչ դուրս էր գալիս նրա գրչի տակից, բաւական էր, որ հարցը վճռէր եւ առանց կռիւների ու յարձակումների։ Եւ իրաւ, ինչը կարող էր աւելի գեղեցիկ կերպով պաշտպանել աշխարհաբարի դատը, քան, օրինակ, «Մայր Արաքսի»-ն։

Մինչեւ 1857 թուականը լոյս տեսաւ «Գամառ-Քաթիպայի» տետրակներից 5 հատ։ Ամեն մի տետրակում լոյս էին տեսնում Պատկանեանի նոր ոտանաւորները։ Դրանց մասին չը խօսենք առ այժմ։ Դեռ տեսնենք թէ ինչեր էր անում իր ազգի համար մեր ուսանող Պատկանեանը։

Նրա պէս մի վաղամեռն բանաստեղծը անշուշտ, ամենից լաւ պիտի հասկանար, թէ որքան կրթիչ եւ ազնուացնող նշանակութիւն ունի երգը ժողովրդի համար եւ որքան հարկաւոր է տալ ժողովրդի ձեռքը գեղեցիկ երգերի մի ժողովածու։ Շիլլերի «Զար մարդիկ երգ չունեն» խօսքերը նշանաբան ընդունած՝ մի «Ազգային Երգարան» է հրատարակվում Պետերբուրգում 1856-ին, աշխատասիրութիւն Գամառ-Քաթիպայի։ Այդտեղ հաւաքված են այն ժամանակվայ բոլոր յայտնի երգերը, մեծ մասամբ աշխարհաբար լեզուով։ Բայց աւելի նշանաւոր նորութիւնն այն է, որ երգերի մի մասը ձայնագրված է եւրոպական նոտաներով։ Եղանակները գրել է մի ոմն Նիկոլայ Տրիֆանով. Պատկանեանը բաւական աշխատանք թափեց՝ օտար մարդու ձեռքով այդ գործը գլուխ բերելու համար։ «Զի հատարձակեցայ—ասում է նա—իմ ճաշակով ամենին էլ մի վճռական կանոնի տակ դնել, մինչեւ որ խորհուրդ չանեմ մի քանի անձանց հետ, որոնք աւել հմտութիւն ունին այդ բանի մէջ քան թէ ես»։ Ուշադրութեան արժանի են մանաւանդ հետեւեալ խօսքերը, որոնք լաւ ընորոշում են թէ երիտասարդ գործիչին եւ թէ նրա ժամանակը.

Մեր կարողութեանը չափ մենք այսքան արինք Պետերբուրգի պէս քաղաքումը, ուր շատերի կարծիքով ազգայնութիւնը միանգամայն սառած է հայոց մէջ։ Երբ որ ոսկին ու արծաթը լիքն են գրպանումը, երբ որ տպագրութեան ամեն յարմարութիւնը ունիմ, երբ որ վստահ եմ որ գիրքս սակաւ միջոցումը կը ծախսի՝ այդ ժամանակ մեծ սխրագործութիւն չէր արածս, եթէ տարին մի գիրք կարողանայի դուրս տալու. բայց դարեւոր փոշիների տակից քրքրելով դուրս հանել օտարազգեայ գործատուններից հայոց մայրեր, ծանր պայմաններով ձուլել տալ, աւելի ծանր պայմաններով տպել, չիմանալ տպած գիրքը ո՞ւր և որոնց մէջ տարածել, և եթէ այդ ամենը մի աննշան և փողազուրկ (եթէ կարելի է այսպէս ասել) երիտասարդի միայ կատարելու՝ այնուհետև կարո՞ղ է ասել մինը, որ մեզ դրդող շարժաբիթը ազգի անպայման սէրը չէր, այլ մի ուրիշ բան...

Աննշան եւ փողազուրկ երիտասարդ... Սրանով շատ բան է ասված։ Բայց եւ այդպէս, չէ վհատվում այդ երիտասարդը. նա հրատարակում է Այբբենարան՝ գրաբար լեզուն սովորելու համար, հրատարակում է Ռոբինզոն Կռուզոի պատմութիւնը եւ Եզովբոսի առակները պատկերազարդ, պարզ ու հասկանալի աշխարհաբարով, թարգմանութիւններ է տպագրում «Հիւսիսափայլի» մէջ, մի խօսքով աշխատում է անդադար, մտաւոր կերակուր է տալիս իր ժողովրդին։ Եւ այս բոլորը երբ։ Ուսանող ժամանակ, մի այնպիսի ժամանակ, երբ նա «աննշան եւ փողազուրկ» երիտասարդ է։

Բայց ոգեւորութիւնը, գաղափարը թեւեր են տալիս նոյն իսկ աղքատութիւնից մաշվող երիտասարդին։ Ահա ինչ է ասում մեզ Ռափայէլ Պատկանեանը, այդ զարմանալի ուսանողը, որ նոյն իսկ իր ժամանակի ընդհանրապէս բարեխիղճ ու իդէալիստ ուսանողութեան մէջ էլ աչքի էր ընկնում, իսկ այժմեան ուսանողութեան համար կարող է մի բարձր օրինակ համարվել։

(Ը. շարունակվի)

տիրում էր մեծ կենդանութիւն։ Բոլոր բաժինների կարգադրիչները վաղ առաւօտից ըստ կեցին ընդունել ներկայացուցիչներին եւ տալ նրանց մանրամասն բացատրութիւններ։ Ժամի 12-ից յետոյ ցուցահանդէսի դռները բացվեցին եւ հասարակութեան համար։

—

Վեհափառ Կաթողիկոսի հետ Թիֆլիս են եկել Այվազեան Սահակ, Անանիա եւ Յուսիկ եպիսկոպոսները, ինչպէս եւ Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեանը, իբրեւ թարգման։

—

Լսում ենք, որ Սահակ եպիսկոպոս Այվազեան կաթողիկոսական կօնդակով նշանակվել է Պարսկաստանի եւ Հնդկաստանի թեմի առաջնորդ։

—

Սաստիկ անձրեւներից յետոյ Թիֆլիսում լաւացաւ եղանակը։ Թէեւ երկինքը շարունակում է ամպոտ մնալ, բայց անձրեւ չէ գալիս։ Փողոցների ցեխը սկսել է ցամաքել։ Եղանակը չէ խանգարում յօբելեանական տօնախմբութիւններին եւ լուսավառութեան։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան միջնորդութիւնը, որով թոյլատրւում է խնդրում նա ամբողջ Կովկասում նուիրատուութիւններ ժողովելու Նորին Կայսերական Բարձրութիւն ի Տէր հանգուցեալ Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէոդորովնային արձան կանգնեցնելու եւ նրա անունով երկու թոշակ հիմնելու համար կանանց բժշկական ինստիտուտում, անցեալ շաբաթ Թիֆլիսի նահանգապետի կողմից ներկայացված է Կովկասի պ. կառավարչապետին։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ ծառայող գրագիրներ Ալավերդով եւ Տէր-Աբրահամով, որոնք ձերբակալված էին նոյն վարչութեան մէջ տեղի ունեցած գողութեան առիթով, այժմ արձակված են բանտից։ Լուրերին նայելով, լուրջ ապացոյցներ կան վարչութեան պահապանի դէմ։

—

Մեզ հաղորդում են մի շատ ցաւալի լուր.— Երեւանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը, անկարող լինելով այլ եւս շարունակել իր պաշտօնը մեր ընթերցողներին արդէն յայտնի իրողութիւնների պատճառով, ներկայացրել է ամենայն հայոց Կաթողիկոսին իր պատճառաբանած հրաժարականը։ Այսպիսով ահա Երեւանի թեմական դպրոցը, մի տարի միայն փոքր ի շատէ բարեկարգ վիճակ վայելելուց յետոյ, դարձեալ մատնվում է կղերական կամայականութիւններին։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Շաբաթ, ամսոյս 22-ին, Էջմիածնի միաբանութեան անունով մի նամակ ստացվեց պ. Զալխուշեանից, որ յայտնում էր, թէ սեպտեմբերի 24-ին Նորնախիջեւանի ս. Խաչ վանքում լինելու է Ռ. Պատկանեանի արձանի բացումը։ Հետեւեալ օրը, այն է արձանի բացման օրը, պատարագից յետոյ, ամբողջ միաբանութիւնը, ճեմարանի աշակերտների մասնակցութեամբ, հոգեհանգիստ կատարեց մայր տաճարում»։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Մխիթարեանների 200-ամեայ յօբելեանի պատճառով Մոսկվայի հասարակութեան կողմից ուղարկվեցին շատ դրվատներ եւ հեռագիրներ։ Անմասնակից չեղան այդ ազգային մեծ տօնախմբութեան նաեւ Լազարեան ճեմարանի աշակերտները, որոնք ուղարկեցին Մխիթարեաններին շնորհաւորական հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ. «Ողջունում ենք սրտանց ձեր 200-ամեայ յօբելեանը գրական-գիտնական ասպարիզում ի փառս ազգի հայոց։ Կեցցեն Մխիթարեանք»։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 23-ին Գայեանէի վանքում Եղիշէ վարդապետ Մուրադեան ստացաւ ծայրագոյն վարդապետութեան աստիճան եւ մօտ օրերս մեկնելու է Թաւրիզ»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. Ձմեռն այստեղ շուտ սկսվեց այս տարի. Կիմիլ ու Զիչի գիւղերում բաւական ձիւն է եկել անցեալ օրը եւ կանեփի ցանքերը Կիմիլ գիւղում վնասվել են. գիւղացիների մեծամասնութիւնը այդ ցանքերով է պարապում։ Քաղաքում ցրտեր են լինում։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Անցեալներում ապարանցի մէկ հայ օրիորդ Վաղարշապատի ուղղափառ եկեղեցում յունադաւանութիւն ընդունեց եւ հետեւեալ օրը պսակվեց մէկ ռուս ատաժնիկի հետ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Այն հաղուադէպ լուրերից, որոնք հասնում են Կ. Պոլսից Թիւրքիայի հայաբնակ գաւառներից, «Temps» լրագրի թղթակիցը հաղորդում է հետեւեալը. «Տեղեկութիւն է ստացված, որ Բ. Դուռը նշանաւոր չափով զինուորական ոյժեր է ուղարկում, Մէհմէդ-Ալի-փաշայի հրամանատարութեամբ, դէպի Սասուն այդ շրջանը գրաւելու համար։ Երեք հայաբնակ գիւղում Մէհմէդ-Ալի-փաշան պէտք է չինէ բլոկհաուզներ։ Բիթլիսի վալին հասել է Մուշ, որպէս զի իր ձեռքն առնի այդ շրջանի քաղաքացիական վարչութիւնը, որտեղ ժողովրդի յուզմունքը այնքան զօրեղ է, որ պարբերական փոխանորդը թոյլատրութիւն է խնդրել հեռանալու իր պաշտօնից։ Երզրումում տեղեկութիւն է ստացված, որ հայերի եւ համիդիէ զօրքերի մէջ տեղի է ունեցել արիւնահեղ ընդհարում։ Կ. Պոլսում անհանգստութեամբ սպասում են տեղեկութեան Վանի ռուսական հիւպատոսի կողմից, որին ռուսաց դեսպանը ուղարկել է Մուշ։

—«Berliner Tageblatt» լրագիրը ստացել է հետեւեալ հեռագիրը Կ. Պոլսից. «Համաձայն հիւպատոսական զեկուցումների Անատոլիայից, գիւղական թիւրք ազգաբնակութեան մէջ, որին երեւի, դրդում են իմամները, նկատվում է մտքերի չափազանց զօրեղ յուզմունք եւ թշնամական վերաբերմունք դէպի եւրոպացիները։ Ժողովուրդը ենթադրում է, թէ աւարթանը գտնվում է սասունի նեղ դրութեան մէջ Ֆրանսիայի անարդար պահանջների պատճառով, որոնց նա չէ ուզում կատարել։ Հրապարակներում բացարձակ ապատամբութիւն է քարոզվում եւրոպացիների դէմ եւ առանց ծածկելու առաջարկվում է, որ բոլոր քրիստոնեաների գլուխները կտրվեն»։

—Մակ-Կինլէյի կտակը արդէն բաց է արված։ Հանգուցեալի նիւթական կարողութիւնը հասնում է 225,000 դոլլարի, այս գումարի մէջ հաշուելով նաեւ ապահովագրական պոլիսով ստացվելիք 67,000 դոլլարը։ Մակ-Կինլէյ իր ամբողջ կարողութիւնը թողել է կնոջը եւ մինչեւ 1000 դոլլար տարեկան թոշակ է նշանակել իր քրոջը։

—Բուդապէշտի «Budapestische Hirlap» լրագիրը հաղորդում է, թէ ունգարական մինիստր-նախագահ Սէլլ յայտնեց, որ եթէ ընդունվի գերմանական մաքսային նոր օրինագիծը, Աւստրօ-Ունգարիան ոչ մի առեւտրական դաշնագրութիւն չի կապի Գերմանիայի հետ եւ որ այդ օրինագիծը կարող է տեղիք տալ մաքսային պատերազմի։ «Magiar Nemzet» կիսապաշտօնական թերթը հաստատում է այս տեղեկութիւնը։ Այդ լրագիրն ասում է, թէ մինիստր-նախագահ Սէլլ, արտաքին գործերի մինիստրի եւ աւստրօ-ունգարական կառավարութեան համաձայնութեամբ, տեղեկութիւն տուեց գերմանական կառավարութեան, որ եթէ գերմանական մաքսային տարիֆի նախագիծը ընդունվի այն ձեւով, որպէս այժմ հրատարակված է, Գերմանիայի հետ անկարելի կը լինի կապել որ եւ է առեւտրական դաշնագիր։ Ապա Սէլլ ապացուցանում է, որ այդ օրինագծով Գերմանիան կը զինէ իր դէմ համարեա ամբողջ աշխարհը եւ կը հասցնէ իրան մի այնպիսի վնաս առեւտրական շրջանում, որը չէ կարող վարձատրել ոչ մի ուրիշ օգտաւէտ գործ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Պոպէնգուտ նշանակվում է Զաբայկալեան շրջանի զօրքերի շտաբի հրամանատար։ Ռուսաց Կարմիր խաչի ընկերութեան գլխաւոր վարչութեան կողմից յայտարարվում է, որ ի նկատի ունենալով անքերբիութիւնը կայսրութեան նշանաւոր մասում, Կարմիր խաչի ընկերութիւնը, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնայի կամքով, կանչված է նպաստելու կարօտ ազգաբնակութեանը օգնութիւն հասցնելու համար, կազմակերպելով թէ բժշկական-սանիտարական օգնութիւն, թէ ճաշարաններ հաստատելով աշխատանքին անընդունակների համար, եւ չքաւորներին հաց, սպիտակեղէն, շոր եւ վառելիք մատակարարելով։ Կատարելապէս համոզված լինելով, որ կայսրութեան ամբողջ ազգաբնակութիւնը, որը միշտ արձագանք է տալիս ժողովրդական ամեն տեսակ կարօտութեան դէպքում, այժմ եւս իր առատ լուսայով կօգնէ Կարմիր խաչին իր առաջիկայ ընդարձակ գործունէութեան մէջ, ռուսաց Կարմիր խաչի ընկերութեան գլխաւոր վարչութիւնը հանդանակութիւն է սկսում Կարմիր խաչի բոլոր հիմնարկութիւններում կայսրութեան մէջ ի նպաստ տառապող ազգաբնակութեան անքերբիութիւնից վնասված շրջանում ընկերութեան գլխաւոր վարչութեան մէջ, Պետերբուրգ, Ինժէնէրնայա փողոց, № 9, նուիրատուութիւնների ընդունելութիւնը տեղի է ունենում ամեն օր։

ՆԻՇ։ Երէկ ժամանեց սրբազական զոյգը։ ազգաբնակութիւնը ի պատիւ նրա ջահագնացք սարքեց։ Պատասխանելով քաղաքագլխի ճառին, թագաւորն ասաց, որ թագաժառանգութեան կարծեցեալ հարցի մասին ասված բոլոր մեքենայութիւնները՝ Սերբիայի եւ նրա դինաստիայի թշնամիների սարքած ինտրիգների հետեւանք են։ Դրա հետ միասին ճգնաժամի մասին տարածված լուրերը անհիմն են. կառավարութիւնը վայելում է թագաւորի կատարեալ վստահութիւնը եւ կատարում է իր պարտաւորութիւնները ի մեծ գոհունակութիւն նրա։

ԿԱԼԿԱԹԱ։ Աւղանական էմիրը վախճանվեց սեպտեմբերի 20-ին։

ԼՕՆԴՕՆ։ «Daily Mail» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, ներկայումս բանակցութիւններ են տեղի ունենում Կապի գաղթականութեան Նատալի եւ Լօրէնցօ-Մարկէզի մէջ։ Լուրերին նայելով, դրա հետ կապ ունի այստեղի պորտուգալական դեսպանի գնալը Լիսաբոն։ Պորտուգալիան իբր թէ բարեհաճութեամբ է վերաբերվում այդ նախագծին։

ՍԻՄԼԱ։ Քաբուլից ստացված տեղեկութիւնների համեմատ, աւղանական էմիրը ծանր կերպով հիւանդացաւ սեպտեմբերի 15-ին. անդրանիկ որդի Գաբիբուլլա խանը պահանջեց խորհրդում, որ մաղթանքներ կատարվեն էմիրի առողջութեան համար, իսկ սեպտեմբերի 20-ին յայտարարեց, որ իր հայրը մեռաւ առաւօտեան 3 ժամին։ Գործերի դրութեան մասին Քաբուլում ոչինչ յայտնի չէ։

ՀԱԱԳԱ։ Լրագիրների տված լուրը, որ իբր թէ նախագահ Կրիւգէր կամ բօէրական մի-սիան տեղեկութիւն են ստացել, թէ միջազգային միջնորդ դատարանը մերժել է ի տեղեկութիւն առնել նրանց միջնորդութիւնը՝ գործին վճիռ տալու միջնորդ դատարանով, ճիշդ չէ։ ոչ Կրիւգէրը, որը չէ ստորագրել ամենեւին մի այդպիսի առաջարկութիւն, ոչ միսսիան այդ տեսակ հաղորդագրութիւն չեն ստացել։ Մանաւանդ որ վերջինս անկարելի է, որովհետեւ միջնորդ դատարանի մշտական վարչական խորհուրդը, որը միայնակ իրաւունք ունի այդպիսի հարցեր վճռել, չէ գումարվել առաջարկութիւնը մտցնելու ժամանակից։ Նրա գումարումը, որի մասին խօսք կար այս օրերս, մինչեւ այժմ տեղի չէ ունեցել։

ԲԵՐԼԻՆ։ Օբէր-նախագահը սեպտեմբերի 22-ին դիմեց մագիստրատին երկու նամակներով, որոնցով հրաժարվում է թագաւորի հատատութեանը ներկայացնել ձայնաւոր կառուցմանի ընտրութիւնը, որը ընտրված է բուրգոմիստրի օգնական. դրա հետ միասին նա հարցնում է, թէ արդեօք հարկաւոր չէ, ի նկատի ունենալով իրերի դրութիւնը, դնել քաղաքային որ եւ է յարմար պաշտօնեայի վրա ժամանակաւոր պաշտօնակատարութիւնը։ Մագիստրատը վճռեց նամակների մասին տեղեկացնել մունիցիպալիտէտին, իսկ քաղաքային պաշտօնեայ նշանակելու միջնորդութիւնը մերժել։

ԲԱԹՈՒՄ։ Քաղաքային դուման, սեպտեմբերի 24-ի նիստում, ձայնաւոր Պալմի առաջարկութեամբ, միաձայն վճռեց յայտարարել Ռուսաստանի հետ Բաթումի միացման 25-ամեակը, որ լրանում է 1903 թուի օգոստոսին, քաղաքային թատրոն կառուցանելով եւ քաղաքային հրապարակական գրադարան բանալով։ Առանձին յանձնաժողով է ընտրված այդ առաջարկութիւնը մանրամասն մշակելու համար։

ԳՐՕԴՆԱ։ Սեպտեմբերի 13-ին Բէլոստոկեան գաւառի Սկօրուպա գիւղում հրդեհը ոչնչացրեց 126 շինութիւններ ժողովված ամբողջ հունձով։ Վնասվեցին 30 տանտէրեր. վնասը 52,600 ռուբլի է։

ՎԻԵՆՆԱ։ Ժամանեց պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդենբուրգսկի։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ։ Լրագիրների խօսքով, մինիստրների երէկվայ խորհրդի մէջ քննվում էր զինուորական արտակարգ բիւդժէտը. վերջինս հաշուած է 3½ միլիոն կրոն եւ բաժանված է հետեւեալ կերպով. 1,180,000 ցամաքի կողմից Խրիստիանիան ամրացնելու համար, 1,400,000 արագաձիգ թնդանօթներ ձեռք բերելու, 800,000 մարտկոցներ կառուցանելու աշխատանքները շարունակելու համար Խրիստիանիայի մօտ, 120,000 ականային խոչընդոտները աւարտելու Բէրգէնի մօտ։ Սովորական զինուորական բիւդժէտը կազմում է 14 միլիոն։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Ցունաց թագաւորը սեպտեմբերի 25-ին երեկոյեան ճանապարհ է ընկնում Վիսբադէն։ Ցունական արքայորդի Գէօրգի դեռ մի քանի օր այստեղ կը մնայ։

26 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական կալուածական բանկի 5% գրաւական թղթերի ընդունելութիւնը նորերի հետ փոխելու համար բացվում է պետական բանկի բոլոր հիմնարկութիւններում 1901 թուի հոկտեմբերի 2-ից եւ կը կատարվի Պետերբուրգում պետական պահեստների պահպանութեան գրասենեակի բաժնում։

ԲՕՐԻՍՕԳԼԷԲՍԿ։ Այստեղ երկու օր է փոթորկալի եւ ցուրտ եղանակ է։ Երէկ երեք հրդեհ կար, որոնք հաջողաբար բարենպաստ վերջացան։

ՊՐԱԳԱ։ Սեպտեմբերի 25-ին կատարվեցին գիւղական կուրիանների 79 պատգամաւորների ընտրութիւններ։ Ընտրված են 49 չէխեր եւ 30 գերմանացիներ։ Այդ թուում որքան երիտասարդ չէխեր, ազգարներ եւ ժողովրդասոցիալական կուսակցութիւնների անդամներ կան, դեռ եւս յայտնի չէ, բայց երիտասարդ չէխերը շատ տեղեր կորցրին. գերմանական կողմից ազատամիտներն անհետացան, իսկ ընտրված են գլխաւորապէս հակասեմիտները։

ԼՕՆԴՕՆ։ Պետական քարտուղար Համիլտոն այստեղ վերադարձաւ հէնց որ ստացաւ աւղանական էմիրի մահվան լուրը։ Կէսօրից յետոյ տեղի ունեցաւ Հնդկաստանի գործերի վերաբերեալ խորհրդի արտակարգ նիստը։

ՊԱՐԻԶ։ Բիւդժէտային յանձնաժողովը վճռեց վերացնել հոգեւոր գործերի վարչութեան բիւդժէտը։

ՊԷԿԻՆ։ Կայսերական պալատը Սիանֆուից ճանապարհ ընկաւ սեպտեմբերի 23-ին։ Նա ուղեւորվեց Կայֆէնգֆուի կողմը, որից յետոյ կը կանգնի Խանկօի եւ Պէկինի ճանապարհի վրա։—Լի-Խունգ-Զանգը առողջացաւ եւ Նորից ստանձնեց իր պաշտօնը։

ԲԻԱՐՐԻՑ։ Նատալիա թագուհուն ամենամերձաւոր շրջաններում մի քանի լրագիրների այն տեղեկութիւնը, որ իբր թէ թագուհին դիտաւորութիւն ունի կաթոլիկութիւն ընդունել, տէնդէնցիոզ է եւ նպատակ ունի վնասել թագուհու անուան։

ՊԱՐԻԶ։ «Sacré Coeur» եկեղեցու առաջ տեղի ունեցաւ ռումբի պայթիւն։ Մի քանի ապակիներ եւ մի լապտեր ջարդվեցին։

ՄԱՐՍԷԼ։ Ժանտախտից մեռաւ մի նաւաստի, որը անցեալ գիշեր եկել էր Ֆիումէից։

ԼՕՆԴՕՆ։ Կրառուզէ, Եօհաննէսբուրգ քաղաքի նախկին բօէրական կօմենդանտը, դատի է ենթարկված՝ մեղադրվելով պետական դաւաճանութեան եւ դէպի սպանութիւնը դրդելու մէջ։ Պրօկուրօրը ապացուցարում էր ուղղիչ դատարանի այսօրվայ նիստում, թէ Կրառուզէ, Եօհաննէսբուրգի կօմենդանտ եղած ժամանակ զինադադար հաստատելով, այդ բանը աջողեցրեց պետական դաւաճանութեան գնով եւ օգուտ քաղեց դրանից, որպէս վերականգնեցէ բօէրների մէջ դիմադրական ոգին, ներշնչելով նրանց մէջ պետութիւնների միջամտութեան յոյս։ Ապա Կրառուզէ, մեղադրութեան խօսքերով, դրդում էր իբր թէ դէպի սպանութիւնը։

ՏԱՐԲԱԳՕՆԱ։ Կարլիստական գործակալները պատում են երկրի մէջ, հասնելով մինչեւ Կատէլէօն նահանգը։

ԳՐԱԱՖԲԷՑԷՏ։ Երիտասարդ ապստամբ Բու, որը մեղադրված է պետական դաւաճանութեան եւ սպանութեան մէջ, հրացանի է բռնված։

ՆԷԱՊՕԼ։ Երէկ հաղորդվեց ժանտախտով հիւանդանալու մի նոր դէպքի մասին։

ՊԷԿԻՆ։ Հեռագրատների դիրեկտոր Շէնգ Չինական կօմիսար է նշանակված՝ նոր առեւտրական դաշնագրի վերաբերմամբ բանակցութիւններ վարելու համար։

ԼՕՆԴՕՆ։ «Daily Chronicle» լրագրին հաղորդում են Վաշինգտօնից, որ անգլիական եւ ամէրիկական կառավարութիւնները համաձայնութիւն կայացրին նոր դաշնագրի մասին ամէրիկական կենտրօնական Ջրանցքի վերաբերմամբ։ Այդ պայմաններով կլէյտօն-բուլվէրեան դաշնագիրը իր ոյժը կորցնում է. եւ Ամէրիկան Ջրանցքը կառուցանելու բացառական իրաւունք է ստանում։ Ջրանցքը պէտք է բացվի բոլոր ազգերի նաւերի համար, մի եւ նոյն պայմաններով, բայց նա չէզոք կը լինի միայն խաղաղ ժամանակ, որովհետեւ միմիայն Ամէ-

րիկանչպարտաւոր է երաշխաւորել չէզոքութիւնը եւ իրաւունք ունի պատերազմի ժամանակ ամեն անհրաժեշտ միջոցները ձեռք առնել նրա շահերը պաշտպանելու համար։ Ռուզվէլտ հոգ կը տանի, որպէս զի սենատի կողմից անյապաղ ընդունվի դաշնագիրը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻԻԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Դզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Թարանտաեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Ցպակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբոյժ), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Գնար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՄԻ ՀԱՑՈՒՀԻ

որ գիտէ հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուները, կամենում է տնային վարժուհու պաշտօն ստանալ Թիֆլիսում կամ այլ քաղաքում, 7—9 տարեկան փոքրահասակ մէկ կամ երկու աղջիկների հետ պարապելու համար։ Կը կամենար նաեւ կօմպանիօնկա լինել մի տիկնոջ։

Հասցէն՝ Театральная улица, Кавказское Товарищество Торговли Аптекарскими Товарами. Спросить казначея Петрова. 4—6

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սաթենիկ
ՅԵՐՄԱՋԱՆԵԱՆՑ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻԻԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7

Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի։
(հ. կ.) 9—60

Գեաերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ ապիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ ապիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ արուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Գեաերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, ընակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Գապօվի եւ Արիստակօվի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 76—100

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, սեպտեմբերի 29-ին,
Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը, մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՑՇԻ,
կը ներկայացնէ

ԷՐՆԱՆԻ

Դրամա 5 արարուածով, հեղ. Վ. Հիւգօի,
Թարգմ. Ց. Տէր-Գէորգեանի
Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները սովորական են։
Տոմսակները ծախվում են Թատրօնի կասսայում։ 1—2

„ՎՏԱԿ“ *ժողովածուն լոյս տեսաւ եւ վաճառվում է Թիֆլիսի Կենտրօնական գրավաճառանոցում։ Գինն է 1 ր. 50 կ., փոստակաղմ՝ 1 ր. 90 կ., 2 ր., 2 ր. 25 կ.։*

Նոյն տեղը ստացվել են եւ հետեւեալ նոր գրքերը՝

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ. Մատենագրութիւն նախնեաց, Թ. 1901 թ., գ. 1 ր. 50 կ.։

Ս. ԷՋՄԻԱԾՆԱՑ ՕՐԱՑՈՑՑ 1902 թ. գ. 20 կ.

Գրավաճառներին եւ գումարով գնողներին զիջումն է լինում։

Դիմել՝ Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (2.) 1—10

Մամուլի տակից դուրս եկաւ եւ վաճառվում է Թիֆլիսի Կենտրօնական գրավաճառանոցում, ընտիր թղթի վրա, չքեղ հրատարակութեամբ

ՊԷՊՕ

Կոմէդիա երեք արար. երկր. տպագ. ուղղած. գինը 50 կ.։

Նոյն գրատանը վաճառվում են հեղինակի եւ հետեւեալ աշխատութիւնները՝

«Գիշերվայ սարը խեր է», կատակ. մէկ արարուածով, երկ. տպ. ուղղած, գ. 30 կ.։

«Օսկան Գեարովիչը էն կինքումը», կատ. 1 արար. գ. 30 կ.։

«Ամուսիններ», կոմէդիա հինգ արար. երկ. տպագ. ուղղած. գ. 1 ր.։

Դիմել՝ Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (4.) 1—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատունը 1901 թ-ի հոկտեմբերի 2-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու հետեւեալ աշխատանքները,—քարայատակել 1) Արբէնալի խճուղին 800 քառ. սաժ. տարածութեամբ, 2) Լազարեան փողոցը, 300 քառ. սաժ. տարածութեամբ, 3) Կախէթի խճուղին՝ 800 քառ. սաժ. տարածութեամբ, եւ 4) ճանապարհը երկաթուղու գծից մինչեւ այնտեղ, ուր կարում են միմեանց Կօպչերովսկայա եւ Անտոնիեվսկայա փողոցները, 315 քառ. սաժ. տարածութեամբ, ընդամէնը 5500 ռուբլի գումարի։ Աճուրդին ժամանակել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 2—3

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԵՐ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գեոդեզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնադրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դիլորցովայա Նովէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։

4—100

ԲԱՐԵԿ

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆ

վերադարձաւ արտասահմանից եւ առաջվայ պէս ընդունում է ցերեկվայ 12—2 ժամը եւ 6—9 ժամը երեկոյեան միզասեռական, վեներական եւ սիֆիլիտիական հիւանդութիւն ունեցողներին։ 3—3

Հաշուապահութեան եւ գրասենեակային տեղեկութիւնների Կուրսեր

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԿԻՑ

(Երկրորդ տարի)

Երկու սեռի գրագէտ անձանց համար
եւ

Գործնական դասեր ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ Հասակաւորների համար

Պարապմունքների սկիզբն է հոկտեմբերի 2-ին։ Մանրամասնութիւնները իմանալ Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում (Զուզուրէթ, սեփական տուն) ամենայն օր, ժամի 9-ից մինչեւ 2-ը։ Կիրակի օրերը—ժամի 12—2։ 4—12

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ *դասընթացքի XIII շրջան*

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եւ դասախօսելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաեւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուետեսութեան։
Բ) Առեւտրական թուաբանութիւն։
Գ) Առեւտրական նամակագրութիւն։
Դ) Առեւտրական եւ ժուրնալների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1901 թ-ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՌՈՒԲԼԻ

Ցանկացողները թող դիմեն գրատոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեւսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, *հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։* ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ *Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։* 24—25

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՒԱՐՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ

տալիս է մասնաւոր դասեր՝ հայերէն եւ գերմաներէն լեզուներից, նոյնպէս հայոց գրականութիւնից։ հաճէն հարցնել «Մշակի» խմբագրատանը։ 5—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՍՐԱՆԻ

աւագների խորհրդի որոշմամբ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ

տեղափոխվում է իր ձմերային բնակարանը սեպտեմբերի 29-ին։ 2—2

Սարգիս Վ. Աբրահամեան

Адр. Сололаки, уголъ Гановской и Садовой, д. Маркарова, № 27 и 31.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտեսական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ չոգենաւային հաշուապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն.
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Պարտաւորիչների օրէնքները։
5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ չրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։

Հասցէն՝ ՍՕԼՕԼԱԿ, *Գանօվսկայա եւ Սադօվայա փողոցների անկիւն, տուն Մարգարեանի №№ 27 եւ 31։*

Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։ 24—25

Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան

„Ֆ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաջարկում է թարմ կարամէլ մրգեղէնից, մենպանսէ, մարմէլադ, պաստիլա, զէֆիր եւ այլն։

Պատուէրներով դիմել գործարան. Պավլովսկայա փողոց, սեփական տուն, տէլէֆօն № 362.

Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տէլէֆօն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլօնիական խանութներում։

Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։ 57—100

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Сентября 1901 г.

Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул